ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/52 «02» 02 2026 թ.

«Արշավիր Ավտո» ՍՊԸ (ՀՎՀՀ 00487455)
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նոր Արեշ 15 փ/7/12
Հեռ.՝ +374 93 601909, էլ.հասցե՝ arshaviravto@mail.ru , info@eltender.am

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և «Արշավիր Ավտո» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև 2025 թվականի հունվարի 9-ին կնքված «ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2025/Ա-6-2» ծածկագրով «մեքենաների և սարքավորումների» ձեռքբերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը պարտավոր էր մինչև 2025 թվականի օգոստոսի 31-ը մատակարարել 8-րդ չափաբաժնով նախատեսված (CPV 43321190/503՝ մարտկոցով ունիվերսալ հիդրավլիկ կտրող և լայնացնող գործիքներ) ապրանքները, սակայն սահմանված ժամկետում մատակարարում չի իրականացրել:

Համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը. 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝

ՀՀ ներքին գործերի նախարարությունը մասնակի միակողմանի լուծում է ՀՀ ներքին գործերի նախարարության և «Արշավիր Ավտո» ՍՊ ընկերության միջև 2025 թվականի հունվարի 9-ին կնքված «ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2025/Ա-6-2» ծածկագրով պայմանագիրը: Պայմանագիրը կհամարվի մասնակի միակողմանի լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Արշավիր Ավտո» ՍՊ ընկերությանը տրվում է 5 օրացուցային օր պայմանագրի չկատարած մասով տուժանքով սահմանված գումարներ՝ 1,800,000 /մեկ միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ որակավորման ապահովում և 1 200 000 /երկու միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ պայմանագրի ապահովում ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության համապատասխանաբար «900008000698» և «900008000664» գանձապետական հաշվեհամարներին փոխանցելու նպատակով, Պայմանագրի 6.2 կետով սահմանված տույժը, 106 աշխատանքային օրերի նկատմամբ, որը կազմում է 636 000 /վեց հարյուր երեսունվեց հազար / ՀՀ դրամ, ինչպես նաև Պայմանագրի 6.3 կետով սահմանված տուգանքը, որը կազմում է 127 950 /հարյուր քսանյոթ հազար ինը հարյուր հիսուն/ ՀՀ դրամ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության N900005028106 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ներքին գործերի նախարարություն՝ ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Արշավիր Ավտո» ՍՊ ընկերությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ընկերության տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին, իսկ Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը՝ պայմանագրի ապահովում և որակավորման ապահովում, սահմանված կարգով, կներկայացվի «ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲ ընկերություն վերոնշյալ գումարները գանձելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

Գնումների համակարգման բաժին
Կատարող՝ Ա. Սարգսյան
Հեռ.՝ 010-59-61-52